

Ք Ե Փ Ի Ի Ռ

Հ Ա Յ Բ Ե Ն Ե Ա Յ

Ինչ որ խմբագրութեան և Տնօրէնութեան կը վերաբերի պէտք է ուղղել առ ՊԵՏՐՈՍ ԲՈՐԹՈՒՔԱԼԻՆ, Պօլսա Մէրձանը Իմամ—Սը խան, Թիւ 4, — Մեծաբնական կամ ծրար կը մերժուի : Օրագիրն առնէ շաբաթու հինգշաբթի օրերը կը հրատարակուի : Վեցամսեայ շրջանին գինը 20 դուրունոց աւելցնելով ԿԱՆԻՍԿ Վճարելի, առնէ Թիւ 4 կրնան ստորագրուիլ : — Ինչ որ երթալիք Օրագրաց ճամբու ծախքը առնողին վրայ է : — Ծանուցման տողը 4 դուրուն : —

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ԿՐՆԴՈՒՆՎԻՆ . Կ . ՊՕԼԻՍ Օրագրոյ գրասենեակը : — Թիֆլիզ Մեծարդոյ Աղէքսանդր աղա Երեյեան : — Զմիւռնիա Արշալուսոյ գրասենեակը : — Թէքէրտաղ Պ . Թագաւոր Ֆէյսլեան : — Կէյք, Օրթագիւղ , Դընձըար Պ . Խաչատուր Մանուէլեան : — Տրապիզոն Պ . Խաչատուր Էմմանուէլ :

Ա.Օ.Դ.

Օրագրոյն ցրուիլը փոխուելուն պատճառաւ կը խնդրեմք մեր Մեծարդոյ բաժանորդներէն , որ եթէ ոմանց օրագիրը ձեռքը չէ հասած մեզ իմաց տան :

Արդոյ խմբագիր .

Մեր 94 թուոյն միջոցաւ " Ժողովրդեան " Լուսինայի մէջ " վերնագրով հրատարակած յօդուածնու մէջ փոխանակ աղջկան տաներեցը եղող քահանայն " ըսելու տեղ " սխալմամբ " աղջկան հայրը եղող քահանայն " ըսուել է : Կիսգրեմ, որ այս սխալը ուղղելու համար ներկայ ազգարարութիւնս Ձեր թերթին միջոցաւ հրատարակել ըստե՛ստեմք :

Գրիգոր . Վ . Ալէքսանտրեան
խմբագիր—Տնօրէն

865
Մայիս 7 .

Պեղատեան Թուշիկ Օրագրոյ :

Բ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

ԿՍՄ ԵՂԱՆԱԿ ԳԱՐՆԱՆ

Ի՞նչ քաղցրիկ զեփուռ ,
Սըփուէ դայի՞ն 'ի դայի՞ն .

Նոր ոյժ նոր աշխոյժ ,
Պարգեւէ յաշխարհ :
Ի՞նչ կենսանորոգ ,
Զուարթ եղանակ .
Ցաւոց մոռացման ,
Յուսոյ նշաւակ :
Ի՞նչ երջանկաւէտ ,
Հովիտը պերճափայլ .
Պապաթունը յոխորտը ,
Բէկը լուսափայլ .
Բուրմունք բարդ 'ի բարդ ,
Սիրուն մանիչակ .
Ոսկեխնձորիկ ,
Յասմիկ և մեխակ :
Վարդունք թերթ 'ի թերթ ,
Մաքրափայլ շուշան .
Ծաղիկը գունապէղ .
Ոժիտը բնութեան ,
Ոսկեգոյն դալարը ,
Եւ հասկը պնդաղարը ,
Յանուշ զեփուռիդ ,
Տարուբերին արդ :
Թռչնիկը 'ի ճիւղ ճիւղ ,
Ըզդարուստ արփույն .
Երգօք 'ի հրճիւ ,
Շնորհաւորեն .
Մանկունք 'ի յորան ,
" Ընկղայ " դուլուլ .

Գառինք 'ի յովիտս ,
 Գողտրիկ մայելով :
 Օրհնեն Արարիչն ,
 Բնութեան հզօր .
 Որ մեզ պարգևեց ,
 Ահա՛ և այս օր .
 Ո՛վ դու տէր բարձեալ ,
 Առ մահանացուաց .
 Ի՛նչ երջանկագոյն ,
 Շնորհքներ բրած :
 Ո՛րչափ երջանիկ ,
 Մարդս է և ազատ ,
 Բայց աւա՛ղ հազար ,
 Այնչափ ամբարտաճ .
 Ամեն տառապանք ,
 Եւ դառն ցաւեր .
 Քեզմով կ'սփոփին ,
 Եւ դադրին ախեր :
 Ներէ՛ , տէր , ներէ՛ ,
 Մի՛ տեղացիներ .
 Արդար բարկութեանդ ,
 Շանթեր յձիռներ .
 Ներէ՛ , տէր , ներէ՛ ,
 Թէ և ապերախա .
 Բայց քու չնորհացդ ,
 Կարօտիւ ենք արդ :
 Գուն քու անըստաւ ,
 Շնորհացդ ցողեր ,
 Անձրեւէ առատ ,
 Ի մեզ դու , ո՛վ Տէր :
 Եւ դու , մահացաւ ,
 Ինչո՞ւ մինչև ցարդ .
 Մնաս անտարբեր ,
 Շնորհաց երկնառար :
 Ելի՛ր , յազգարեղ ,
 Բա՛ւ է աւդ օրօր .
 Ե՛կ արդ 'ի պարտեղ ,
 Օրհնել զայս նոր օր .
 Զերաջերժ ուխտիւք ,
 Կալ 'ի ծընրադիր .
 Եւ տուր պաշտամանց .
 Լէր արդ համակիր :
 Աւելուք Էիզ ,
 Յօնել 'ի յեթեր .
 Զի քեզ ըստմանք ,
 Ապաւեն և տէր :

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

Ի՛նչ է օդը : — Օդը երեք տեսակ և բոլորովին իրարու հակառակ յատկութիւններ ունեցող կազերէ բաղադրեալ մարմին մ'է . և կը բաղադրուի զլուսուրբար 1 մաս թթուածին , 4 մաս բորաւածին և քիչ մ'ալ ածխած թթու կազերով : Ասոնցմէ մարդուս կենացը հարկաւորը թթուածինն է :

Օդը ի՞նչպէս կը շնչենք : — Օդը բերնէնուս թոքերնիս ընդունելով՝ արեան միջոցաւ թթուածինը ածխայինի կը փոխուի , և երբոր օդը դուրս տանք՝ օդին մէջ ածխած թթու կազը կ'աւելնայ , և թթուածինը կը պակսի . ասով օդային բաղադրութեան չափը կայլայլի . և թէ որ դոց սենեկի մը մէջ սովորականէն աւելի բազմութիւն ըլլայ , և դուրսի օդին հետ հաղորդակցութիւնը կտրուի , թթուածին կազը հատնելով շնչարդելութիւն կը պատճառի . ասոր համար պէտքէ որ նշտած սենեակնուս օդը յաճախ փոխենք , որպէս զի նոր ու զովարար օդով լեցուի սենեակը , և օդը չափականի , ուրիշ մեծ փոփոխութիւն տուա՞յ կուգան :

Ի՛նչ է անձրեւը : Ամպերուն բաղմունքն էն կազմուած և օդուն մէջ գիզուած ջրային կաթիլներուն երկրիս վրայ տեղալը :

Որո՞նք են անձրեւ գալու նշանները : — Թէ որ լուսնին ծայրերը սուր չերեւան , և իր շուրջը հարաւային հովով բակ ունենայ , անձրեւ գալու նշան է :

Արփայէս աստղերը թէ որ տեղոյն ու թըջուածի պէս երեւան , անձրեւի նշան է :

Արփայէս թէ որ ծագիկներուն հօտը սովորականէն աւելի աստղականայ , անձրեւ գալու նշան է , եւ :

Ի՛նչ է մէղը : — Մէղը բուն ամպ է , որ միշտ երկրիս վրայ կըլլայ :

Ի՛նչ է ցօղը : — Գօղը անձրեւի տկուր մ'է , որ արեւուն մօրը մտնելէն ետեւ

“ Ի՞նչ պիտի ընես :
— Այսօր եղածին չափ պիտի հե-
ռանամ այս քաղաքէն : ”

“ Խեղճ պատանի . ահաւասիկ վերջին
ընելիքդ այդ պիտի լինի . բայց խմենք . ”

Արդէն բաւական խմած էի և գլուխս
սկսեի էր դառնալ , սակայն քաղաքավա-
րութեան դէմ՝ դործած չի գտնուելու
համար գաւաթ մի ալ պարպեցի , գա-
ւաթ մը . որ զիս ուժածափ ըրաւ և ան-
զբայացուց :

ԳԼՈՒԽ Բ .

Բացի աչունքերս , բայց ո՛ւր եի , ի՞նչ
էր անցեալը . ասմենէն չէի կրնար յի-
շել գլուխս շատ ծանր էր , իմացականու-
թիւնս շփոթ և խորհուրդներս խառնի-
խառն կէս արթնում էի և կէս քուն , երբեմն
երազներու մէջ կկենայի և երբեմն աչու-
նքս բանալով ապշած չորս դիւ կը նա-
յի , և հազիւ կրնայի խորհել թէ ես ով
եմ . . . բայց ասոնք բոլոր երկայն չափե-
ցին մէկ քանի ժամ անդգայութեան կիս-
արթնութեան և ապշութեան խաղաղիք
մը լինելուս յետոյ վերջապէս կարող եղայ
ինքզինքս գտնելու և կացութիւնս նկա-
տելու :

Գտնուած սենեակս փոքրիկ էր և
պարզ անկողնո՞ւ որոյ վրայ պառկած էի
մաքուր էր և հանգիստ , սենեակին մէջ
տեղը սեղան մը կար , որոյ վրայ փառա-
ւոր կանգնող մը կը պլլար , և մէկ քանի
աթոռներ ասդիս անդին կը կենային :

Հազիւ թէ ինքզինքս գտնելով զքա-
նուած սենեակս կզննէի ահաւասիկ սենե-
ակին դուռը բացուեցաւ , և ճերմակնե-
րով զարթարուած էակ մը ներս մտնե-
լով , որնոր առանց նկատելու իմ շփո-
թութիւնս մտնեալով անկողնոյս քով
կանքնեցաւ և վարկեան մըրեհասնայելով
ըսաւ “ Հոս էր , բայց հոս չէ ” և դռնէն
դուռս ելլելով աներևոյթացաւ , թողլով
զիս որ ուղածիս չափ շուարիմ և զիշերաչը-

ջիկ ոգիի մը հանդպած լինելուս վրայ մը-
աածեմ :

“ Հոս էր , բայց հոս չէ , կըսէի՝ ինք-
նիրէնս ի՞նչ ըսել ուզեց ոգի՞ մըն էր , թէ
ոչ հոգեաւ հրեշտակ մը՝ որ ողորմե-
ցաւ իմ պատանեկութեանս վրայ : Բոլոր
մտաւորական կարողութիւններս ուրան-
ալ որ ամբողջի այս դէպքին՝ մեկնու-
թիւն մը տալու , սակայն նոյնքան աւելի
շփոթեցաւ միտքս և ոչինչ կրցայ հետեցը-
նել և կամ խորհուրդիս կայանք մը տալ ,
և որովհետեւ մէկ կողմանէ ալ գլուխս
ծանր էր և քունը զիս կնկներ , ուստի
քաշելով վերմակը վրաս թաղուեցայ քը-
նոյ կենդանարար բազկացը մէջ :

Բաւական դորացած էի երբ արթն-
նալով ելայ անկողնէս , սակայն յիշու-
ողութիւնս դեռ մարախլապատ վիճակի
մը մէջ և յստակ կերպով չէի կարող
անցեալը յիշել . ուստի ինքզինքս կարելի
եղածին չափ շտկելէս վերջը սկսայ խորհիլ
թէ ո՛ւր եմ և թէ ի՞նչ լինելու եմ , վասն
զի գտնուած տեղս ինձ բոլորովին օտար
էր , և ասիկց ՚ի զատ մէկ կողմանէ ալ
զիշերուան տեսածս յիշելով շուարած
կանգնած ինչ ընելիքս որոշելու չէի կա-
րող : Մինչդեռ այսպիսի տարտամ վիճա-
կի մը մէջ կըտանջուէի , ահաւասիկ զան-
գակի մը հանդարտ ձայնը սկսեալ հնչել ,
և քիչ մը ետքն ալ կայնած սենեակիս
տակէն ողբերգական եղանակ մը սկսաւ
լուռիլ , և ասոնց ետեւէն հազիւ երկու
վարկեան անցաւ հանկարծ սենեակիս
դուռը բացուելով ծեր սակայն երկայ-
նահասակ և զօրաւոր կրօնաւոր մը մտաւ ,
և առանց բառ մը արտասանելու ձեռքի
խաչը երկնցուց ինձ որ համբուրեմ . . .
վարկեան մը վարանեցայ և սրտի կատա-
ղի զգացմամբ մը երեստ մէկզի դառցուցի .
“ համբուրէ՛ այս խաչը ” պոռաց քահա-
նան :

— Հեռացի՛ր խաբեբայ , դռնցի եր-
կու քայլ հեռու երթալով , “ գնա՛ մե-

«իր և խաչք թող վրադ տնկեն» :

« Հայրութիւն . . . անուր հայրութիւն ո՞չ . . . հերեփկոս . . . սկսաւ գոռալ յիմարը առանց իւր անքաղաքաւորութիւնը խորհելու և աչքերը խորունկով սկսաւ ծիւր ծիւր աչքերուն մէջնալիւ :

(Շարահանէի)

ԻԼՏԵԿՈՆՏԱ

Տես թիւ 14 :

ԲՕՊ . Տէր , եթէ այսչափ վիշա կ'զգար , գաղթեցէր . . . :

ՄԱՐ . Չէ , չէ , քեզի ամէն բան պիտի պատմեմ : Հայրենեացս այս գործին համար Հռոմ երկու տարի կենալ պարտաւորեցայ : Հոն Լյութերիկոսոս գրքին հետ սերտ բարեկամութիւն ունեցայ : Պարտէին մեռած էր , բայց սիրուն աղջիկ մը ունէր որ Բոնիֆոյի սիրահարեցաւ : Ես Պաւլոսին առաջարկեցի որ աղջիկս առնէ : Բնիւր ալ իր աղջիկը Բոնիֆոյին տայ , առաջարկութիւնս ընդունուեցաւ , եւ երկու կողմէն փոխադարձ երգումներով պայմանագիրներ գրուեցան եւ ալ սիրտնք անմիջապէս փոխաւոր հարսանեաց պատրաստութիւններն ընել :

Սրմբ ամուսնոյս կողմէն նամակ մը առի , որուն մէջ կըսէր թէ Լյութերիկոսոս Լատին մէջ պատուաւոր ընտանիքէ մը սիրուն երիտասարդ մը տեսնելով՝ անոր սիրահարուած էր , եւ թէ երկուքն ալ ղրկար ջերմ սիրով կը սիրեն : Ես սաստիկ զայրանալով Մաթիլդէին գրեցի որ բոլոր զօրութեամբ գէժ կենայ , եւ առ յարաբերութիւնը խզել ջանայ : Ասոր վրայ ուրիշ լուր չկրցայ առնել : Վերջապէս Պաւլոսն՝ աղջիկը՝ Բոնիֆոյն եւ ես Հռոմէն երանք Միլան եկանք՝ որ այս

կրկին հարսնիքը կատարենք : Միլան գալուս պէս , առջի բերան ինէ ամեն բան գաղտնի էր , բայց հետզհետէ իմացայ որ Լյութերիկոսոս ոչ միայն ամուսնացած էր , այլ եւ հինգ ամիսէն զաւրի մըն ալ տէր պիտի ըլլար : Ահա աղջկանս ամեթալի սիրոյն պատուը :

ԲՕՊ . Ի՞նչ կըսէք , տէր . . . Ախր . . .

ՄԱՐ . Քիցցարտոս անունով անարգ եւ անարիտան մէկը՝ որուն երեսը տակաւին տեսած չեմ , շողորթութեամբ ամուսնոյս ու ծերունի մօրաքեռը սիրաւ շահելով , անոնց հաւանութիւնն առած՝ ու Լյութերիկոսոսին հետ պսակուած էր : Պաւլոսը զայրանալով՝ եղած երգումները երեսիս տուաւ , ղիս թշնամանեց , եւ տպաւնալեզր աղջկանն հետ Հռոմ գարձաւ : Բոնիֆոյ՝ ամուսինը կորսնցնելուն համար սատուիկ բարկանալով՝ զրգուեց ղիս որ վրէժխնդիր ըլլամ : Բարեկամներս սկսան քրթմնջել , մեծամեծներն սկսան պարտաւել , եւ բոլոր քաղաքացւոց երեւելի մասը ծաղրելով ղիս՝ սկսան մատով ցուցնել . . . Ինչ ամեթ , ի՞նչ վիշա :

ԲՕՊ . Իսկ դո՞ւ :

ՄԱՐ . Ես սկսայ հրապարկել վնասը ուել , բայց ի՞նչ դուր : Բոնիֆոյ շատ սրկայ մարդիկ սպառազինեց , ու անոնց հետ գիշեր ատեն Քիցցարտոն այս սրահին մէջ Լյութերիկոսոսին հետ խօսած ասանը բռնեց : Քիցցարտո թէպէտ վիրաւորուեցաւ , բայց փախչելու ճամբան ալ գտաւ : Ես սոսկալի անէծքներ ըրի ամուսնոյս գէժ , որ գողէն անշունջ մարեցաւ գետինն ինկաւ : Անմիջապէս Լյութերիկոսոս յի վրայ յարձակելով սպաննել ուղեցի , բայց չթաղուցին . . . Իսկոյն գուրս ելայ , նոյն բարկութեամբ Տէրութեան առաջին դատաւորին գացի . . . աղջիկս ամբողջամեցի . . . (այս խօսքերը սահալուէ և խզէ զարնածի պէս երկու ձայնով մէկընէ) բարկութեամբ բորբոքած , յան

ցանքն տհաւոր կերպով պատմեցի, եւ բանտարկութեան վճիռն հանել տուի: Երբէկոնտա չորս տարի է որ այն սասկալի բանտին մէջն է, ուր կը հառաչէ կը հէծէ, հուլայ կ'սգբայ, մինչ ես ալ ամեն միտքս քննեմ եւ զուրկ, անձկութեան ու տառապանանայ մէջ թշուառ կեանք մը կը վարեմ:

ԲՕՊ. Հապա ամուսինդ... (սրտի ցաւով):

ՄԱՐ. Ամուսինս մի' հարցնեմ (էնչա՞նք քանդիմ ես նայելով էր հառաչէ):) մէկ կողմանէ իմ բարկութիւնս ու վրէժխնդրութիւնս, միւս կողմանէ իր ունեցած ահն ու դողը. եւ վերջապէս բանտարկուած ազնկանը կսկիւծը՝ սիրելի ամուսինս գեղեցիկ գրին:

ԲՕՊԵ. Իսկ Քիցցարոս...:

ՄԱՐ. Քիցցարոս... անիրաւ Քիցցարոսն իմ բարկութենէս, Բոճիւքոյին կատաղութենէն ալ պոճեւով, իր պուզակին հետ փախաւ. Պարպարոսային զօրաց հետ Պաղեստին դնաց, հիմա նոր լուր առինք թէ թշնամեաց սուրէն վիրաւորուելով մեռած է: Բա՛րէ, ինչո՞ւ իմ ձեռքովս անդամին արիւնը չի կրցայ հեղուլ, որով անյապ վրէժխնդրութիւնս յազեցնէի: Հիմա բարեկամ, քեզ հոս կը թողում, եւ քիչ մը սփռուելու համար տեղ կերթամ, Ելտէկոնտան քեզի կը յանձնեմ, թէպէտ յանձաւոր է, բայց զաւակս է, մնաւ բալով... մնաւ բալով... (հ'ստի էրնալ):

ՏԵՍՏԱՄԵՆ Գ.

Նոյնը, և ԲՕՃԻԷԲՕ.

ԲՕՃ. Ձեզի ուրախալի լուր մը ունիմ, Տէ՛ր, իրաւ ուրախալի, Ձեր աչաց արտասուքը սրբեցէք, ձեր սղոքերը դադրին, եւ ուրախութիւնը ձեր երեսին վրայ փայլի:

ՄԱՐ. Ա՛հ, Բոճիւքո:

ԲՕՃ. Ելտէկոնտայի յանցանքը մըշ-

անչեհաւոր մտապնման մէջ պիտի թողուի. ինքն ալ բանտէն ելնելով՝ մարդկային բնկերութեան ծոյր պիտի դառնայ:

ՄԱՐ. Բայց ի՞նչպէս:

ԲՕՃ. Ատանկ անակնկալ ուրախութիւն մը ո՞վ կրնար յուսալ երբէք. Վիթթոր, Պինտադայի իշխանը, իմ առաջարկած ամուսնութեանս հաւանեցաւ, եւ զԵլտէկոնտա կ'ուզէ ամուսնութեան տանել:

ՄԱՐ. Ճշմարիտ կ'ըսես, Բոճիւքո:

ԲՕՃ. Այո գործին համար Սիլան սուրհանդակ հանեց, ահա դրած նամակը, (Մարգիլին Նաճի Տը Կոփայ): Սմեհեւին առանց շահախնդրութեան, միմիայն ձեր փեսան ըլլալու պատուին կը փախալի. ուստի երկու օրուան մէջ կամ Ելտէկոնտան դրկէք, եւ կամ եթէ կարելի չէ, իրեն վերջին բացասական պատասխանը տար, եւ կ'ուզէ որ հարաւունքն իր հին պալատին մէջ կատարուի. եւ ամեն բան լուծեամք, եւ առանց հանդիսի լմնայ:

ՄԱՐ. Բայց Ելտէկոնտա...:

ԲՕՃ. Ի՛նչ, կարծեք թէ՛ չը՞ հատուիր այսպիսի ամուսնութեան մը, որ իր պատիւը կը հաստատէ, եւ զինք սիրոյ արժանի անձի մը հետ կը միացնէ, որ բոլոր յանցանքները մոռնալով՝ միշտ սիրել կը խոստանայ:

ՄԱՐ. Մտածեմ:

ԲՕՃ. Բայց սուրհանդակը կ'սպասէ, շուտով պատասխան մը...:

ՄԱՐ. Նոյն ամէն բան աղէկ կ'ընելու եմ, քանզի այս թեթեւ բան չէ, եւ ազնկանս համար է որ...:

ԲՕՃ. (Կեղծաւորութեամբ): Այո՛, այո՛, բայց ես ալ իրրեւ հնազանդ եւ խանդակալտ որդի... կը ջանամ...:

ՄԱՐ. Գիտեմ Բոճիւքո, գիտեմ... բայց հիմա անմիջապէս չեմ ուզեր, ո՛չ ալ կրնամ որոշել: Վիթթօրը կը ձանձնամ, սպրկելու ու աղնիւ է, բայց Ել-

տէկննտա կրնայ զայն մերժել... : Կար-
ծեմ այսչափ ըսել բառական է : Սուր-
հանդակը թո՛ղ քիչ մը տպանէ, սրտոտա-
խանը կուտամ հիմա քիչ մը սենեակիս
քաշուիմ : Սրտիս այս անձկութեանը
մէջ... այսչափ յաղման մէջ... չեմ կըր-
նար... : Ի՛նչ սղբայի է թշուառ Հօր
մը վիճակը... (Եր Ենեանք Էլ Դանէ :)

ԲՕՃ . (Համառոտ-Բեանք) Կերեւայ որ
Մարդիկն ՚ի դուժ շարժած է :

ԲՕՊ . Այո՛ , շատ... :

ԲՕՃ . Բայց ի՞նչու համար... :

ԲՕՊ . Հայր է... հարկաւ զուակը
կը սկսէ :

ԲՕՃ . Ես ալ կը սկսեմ՝ զԵրեմիան-
տա , եւ անոր օգտին համար է որ կ'աշ-
խատիմ :

ԲՕՊ . Կարելի է , բայց ես չեմ հաւ-
տար :

ԲՕՃ . Ինչո՞ւ :

ԲՕՊ . Այն խեղճ է , տկար է , եւ
այն ստորճան տկար է՝ որ ամենախորր
սրտագույն մը կրնայ՝ անոր մահտան
պատճառ ըլլալ : Եթէ իրօք սիրելի զԵ-
րեմիանտա , շատանց համոզած ըլլա-
լու էիր Մարդիկը , որ պարտաւ նկատու-
մէրը մէկի ընելով՝ անիրաւ բարկու-
թեանէն դուրսէր , եւ անմեղ զառակը
համբարելով ընդունէր : Հիմա անիկայ
խաղաղ բանտին արգելարանէն հանե-
լով՝ ամուսնացնել ուզելը , որուն՝ ան-
տպասկոյն ոչ սէր , ոչ յօժարութիւն ու-
նի , անոր մահը փութացնել է : Տէ՛ր ,
եւս ամենուն հետ համարձակ եւ անկեղծ
կը խօսիմ : Հառակս ինձի այս իրաւուն-
քը կուտայ , պատուոյս այսպէս կը վայ-
լէ , պաշտօնս ալ նոյնը կը պահանջէ :
Երեմիանտա միութարութեան կարօտ է ,
եւ ո՛չ թէ նոր ամուսնութեան մը . կը
ներէք : (Էլ Երեմ- Է՛րեմայ :)

ԲՕՃ . Յանգուգն , ժպիւրհ... զիս
կրնաս ստեղծ : Բայց իմ ստոյգ- յաղթու-
թեանս չես կրնար հախառակիլ : Երեմ-

կնտա իմ վրէժխնդրութեանս զոչ սկի-
տի ըլլայ : Ես Երմէնէկարտօ գրական փե-
տայ պիտի ըլլայի , անոր սիրուն աղջկա-
նքն ամուսին , հարստութեան մէջ պիտի
լողայի , Երեմիանտա զիս այս ամենէն
զրկեց : Ա՛ն զիս զրկեց . ո՛վ կատարու-
թեանս , մինչեւ հիմա Մարդիկին սրբ-
տին վրայ տիրեցի , եւ անիկայ ուղա-
ծիս պէս շարժեցի : Բնութիւնն ինձի՝
խօսելու եւ կեղծելու ձիւք , եւ այն-
չափ հանճար տունձ է , որ ամենէն խո-
րամանկ մարդը չը կրնար զիս խայտա-
ռակել ու յաղթել : Մարդ կու գայ...
հաւատարիմ ծառաս է... : Կուտայի-
էքի մօտ եկուր : (Ահապարելով Դեմայը
Է՛րեմայ :)

ՏԵՍՏԱՐԱՆ Դ

ԿՈՒՆԼՏԻԻԲԻ Ե ԲՕՃԻԲԲՕ :

(Բաւեր այս տեսարանը պիտի հաւաքուի ,
յաճ յայն-վ , եւ պիտի շարունակուի :)

ԿՈՒ . Տէ՛ր... :

ԲՕՃ . Ալարի՛գան դուար :

ԿՈՒ . Այո՛ տէր , իւր տունը :

ԲՕՃ . Կամակս տուի՛ր :

ԿՈՒ . Այո՛ տէր :

ԲՕՃ . Պատասխան տա՛ւա :

ԿՈՒ . Այո՛ տէր , ահա պատասխանը :

ԲՕՃ . Տո՛ւր տեսնեմ . Երեմիայի քու
տակիներուդ ու վրէժխնդրութեանդ հաւ-
իրումձ է : Այս գիշերը քանի մը ընկեր-
ներով՝ Միլանէն Պինարօ տանող ճամ-
բուն վրայ պիտի դառնուիմ , հոն՝ կաղ-
նի ծառերով պաշարուած հին շէնքին
տեղակներուն ետին՝ դարանամուտ սկի-
տի ըլլանք : Այնպէս ըրէ որ Երեմիան-
տա ալ կողմը գտնուի... մեր դաշնա-
ներէն վերադարձած անտարակոյս սկի-
տի մեռնի : Գիշերուան մութն այս դա-
ւաճանութիւնն անցայտ պիտի ընէ . քու
կամքդ պիտի կատարուի , եւ խոստա-
յաճ վարձքը միզի՝ եղածը մոռնալ

պիտի տայ : Ալարիգօ : : Հաւա աղէկ , այս գործը գրուի հանելու համար , անկէ աւելի անգութ եւ համարձակ մէկը չէի կրնար գտնել . . . յաջողութեան վըրայ ալ ապահով եմ :

ԿՈՒ . Չ'հասկըցայ , տէր . . . :

ԲՕՃ . Երկայն ատենէ 'ի վեր քու հաւատարմութիւնդ փորցած եմ , ուստի այս յանդուգն գործին վրայ քեզ ալ տեղեակ ընել կ'ուզեմ . քանզի դուն ալ մեղի կրնաս օղնել :

ԿՈՒ . Ես ձեր ակնարկութեանը հընազանդ եմ ճէր :

ԲՕՃ . Գիտես որ Մարգիղը շատոնց իշխտէկոնտա իր տունը կանչած կ'ըլլար , եթէ ես խորամանկութեամբ միտքը դարձուցած չըլլայի : Մերթ փառասիրութիւնը դրդուելով , մերթ մեծամեծ մարդոց հեգնութիւնն իրեն յիշեցնելով , այնպէս որ՝ մինչեւ հիմա չ'թողուցի , որ աղջկանը ներէր : Բայց այսուհետեւ զստահ չ'եմ , կրնայ ըլլալ որ ուրիշներուն խրատովը թելադրուելով՝ վերջապէս հայրական գութը չորս տարուան բարկութեանն յաղթէ :

ԿՈՒ . Ո՛րքեմն . . . :

ԲՕՃ . Իշխտէկոնտա աս գիշեր պիտի սպաննուի :

ԿՈՒ . Բայց է՞նչ բանով :

ԲՕՃ . Ալարիգօն սրովը :

ԿՈՒ . Ի՞նչ կերպով :

ԲՕՃ . Մտիկ ըրէ : Այսօր ամեն հընարք պիտի բանեցնեմ , որ Մարգիղին բերնէն զիշխտէկոնտա բանտէն հանելու եւ վիթթօրին հետ ամուսնացնելու հաւանութիւնն առնեմ : Այրահով եմ թէ այս հաւանութիւնը կրնամ ստանալ : Պիտի համոզեմ զինքն որ այս գործը նոյն իսկ այս գիշերուան մէջ կատարելը խահմաթիւն է : Իշխտէկոնտայի ազատութեանն համար տէրութեան տուածին դատաւորէն ալ հրամանագիր կրնամ առնել :

ԿՈՒ . Ետքը :

ԲՕՃ . Ետքը . . . Իշխտէկոնտայի հետ ճամբայ կ'ելեմ , Ալարիգօն , որ ճամբան

իր մարգիլներովը դառնանումս եղած է , մեր վրան կը յարձակի , եւ զիշտէկոնտա կ'սպաննէ :

ԿՈՒ . Հա՛սկցայ :

ԲՕՃ . Մեր հետը դալու կանայք եւ սպասաւորները զարհուրելով՝ կը փախչին , կարծելով թէ՛ աւազակներու յարձակումն է , որոնք այս կողմերը , շաւեն , եւ միշտ ատանկ յարձակումներ կ'ընեն : Ալարիգօն դաւաճանութիւնը ծածկելու մէջ վարպետ է , ուստի դալուները թաղուած կը մնայ : Իշխտէկոնտա մեռնելէն ետքը , Մարգիղը զիս իրեն որդեգիր կ'ընէ . եւ այնպէս կուտէրանի տան ժառանգութեանն եւ տէր կ'ըլլամ , այն նենգաւոր կնոջմէն ալ վերէս կ'առնեմ , որուն պատճառովը , երեւելի աներ մը , ու սիրուն եւ հարուստ ամուսին մը կորուսի :

(Շարունակելէ)

ԲԱՆԻ ԻՐԿՈՒՆ Պ. ԲԱՆԹԱԼՕՆ

ՆՈՒԱԳԱՒՈՐ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ

Ի ՄԻ ԱՐԱՐՈՒՄԸ

Այս վերնադրով գրքայի մը գեղեցիկ թարգմանեալ Պ. Արիտալմա՛ Մ. Գարիպեանէն՝ կը ծախուի՝ Մերճան Պ. Յարութիւն Մարգարեանինըով , ու Մարտի 11 գրածախ Մ. Գառաբիւ՛ ոփն կրպակը՝ գին 5 դրուշ :

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՄԻՆԱՍ Մ. ՀԱՅԿ ԳԱՓԱՄԱՆԱՆԵՐԻ

ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՄԲ

Պ. ԲՈՐԹՈՒԹԱՆԱՆԻ

Ա. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ

Կ. ՊՕԼԻՍ ԽՄԱՄ-ՍԱՆԻ ԽԱՆ